# Աննա Բաբուշյան

## Երբ անտարբեր ենք . . .

Մեր օրերում սով չենք տեսել,

Բայց ամեն օր հոգու սովից մահ ենք տեսնում

Մեր օրերում մարմիններ են միայն պճնած,

Իսկ մարմնում խիղճն է տկլոր ու ամոթխած:

Վախենում եմ բառն արժեքը իր չիմանա

Լռությունը ականջները ամուր փակի,

Վախենում եմ թացն ու չորը վառվի գնա՛

Ու արանքում ճշմարտությունը լու՛ռ մխա:

Վախենում եմ վախկոտներից

Որ Նազար են իրենց կարգել,

Վախենում եմ կկուներից,

Որ ուրիշի բույնն են մտել:

Տուն են շինում ուրիշ բնում ,

Էլ հին կկվի լացն ու՞ր մնաց,

Խաչն են հանում հին գմբեթի

Աստծո արդար դատն ու՞ր մնաց:

Չեմ վախենում կորցնելուց

Վախենում եմ համակերպվել,

Որ մի բուռը՝ կիսով չափ լի

Այսպես կամաց կդատարկվի :

Անտարբեր ենք ասես դարձել

Մեր հին վրեժն էլ ու՞ր մնաց ,

Դե բռունցքվի'ր, մի' խեղճացի

Նախնիները մեզ չեն ների:

22.03.2025

ԱԽՈՒՐՅԱՆ